**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 սեպտեմբերի 2018 թ. N 775 - Ն

ք. Ստեփանակերտ

## 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԲՆԱՓԱՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏԱՏԵՂԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 6-րդ հոդվածի «գ» կետը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հաստատել 2019 թվականի համար բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղը՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը՝ պահանջարկի դեպքում թույլատրել սույն որոշմամբ հաստատված ծավալները 2020 թվականի հաշվարկային հատատեղի հաշվին գործափայտի մասով ավելացնել մինչև 15 տոկոսի չափով, վառելափայտի մասով՝ 20 տոկոսի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Համապատասխանում է»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ — Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2018 թվականի
սեպտեմբերի 17 -ի N 775-Ն որոշման

### 2019 թվականի համար բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղը

(ամբողջ ծավալը ցույց է տրված խտացված խորանարդ մետրերով)

| Հ/Հ | Հատման տեսակը | Ընդհանուր ծավալը | Այդ թվում՝ գործափայտ | | | | | | | Այդ թվում՝ վառելափայտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդհանուր ծավալը | Ըստ ծառատեսակների | | | | | | |
| | | | | Կաղնի | Հաճարենի | Հացենի | Լորենի | Բոխի | Թխկի, թեղի | |
| 1. | Անտառվերականգնման հատում | 36 800 | 6 800 | 700 | 4100 | 100 | 100 | 1800 | - | 30 000 |
| 2. | Խնամքի հատում | 40 400 | 400 | 100 | 100 | - | - | 200 | - | 40 000 |
| 3. | Սանիտարական հատում | 20 350 | 350 | - | 300 | - | - | - | 50 | 20 000 |
| | **Ընդամենը** | **97 550** | **7 550** | **800** | **4 500** | **100** | **100** | **2000** | **50** | **90 000** |

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ — Ա. ԼԱԶԱՐՅԱՆ